

գականներուն այցն ու նուէրը, համբուրեց հօրն ու մօրը ձեռքերը, դեղնած, սիրտ ելած (ո՞վ կ'ըսէր իրեն, թէ ա՛լ չունէր տեսնելիք այդ դէմքերը) ու քահանային յատուկ յանձնարարականով մը, յառաջ Աստուած, ինկան ճամբայ, դէպի արեւմուտք:

Չեմ կրնար այդ ճամբորդութեան հետեւիլ, հակառակ անոր շահեկանութեան: Մեր կորուստները ուսումնասիրելու համար գինաւորուած դպիրը Կարնոյ մէջ պատուած էր Ատանայի առաջնորդին ծածկագրութեանց թուղթերը: Իր մինակութիւնը եւ աշխատանքին մեծութիւնը գիրար կը հերքէին: Գործի մը դէմ, որ ընդարձակ կազմակերպութեամբ մը միայն կը դառնար կարելի: Գիւղերու զանցառումը զգալի՝ Կարինէն Կեսարիա, կ'ըլլար շեշտուած վիճակ, Կեսարիայէն դէպի արեւմուտք: Մեր ժողովուրդը այդ բաց հողերուն վրայ, բանականորէ քառուղիներուն, ձգած ըլլալու էր դաշտերը, ապաստանելու համար քաղաք, ուր ճարտար պետեր կերպ մը ճարել գիտէին չմեռնելու:

Մինչեւ այծարած Ակոյի քարայրը մեր գոյգը անցուց շատ ու շատ «դժուար քառորդներ»: Այս փորձանքները պայմանաւոր չէին միայն ընթացիկ ապահովութեամբ, որ միահեծան կ'իշխէ թուրքերուն տիրակալած հողերուն վրայ, իրենց իսկ կամքովը: Ծաղկահարը՝ ուրիշ երկիրներու մէջ անհետացած, դեռ կ'ապրի հանրապետական կառավարութեան բարեացակամ հովանիին ներքեւ: Այդ փորձանքներուն վրայ կ'աւելնար մօրուքը ընկեր Մաթիկին եւ դժուար բացուող բերանը նորընծայ Սեդոյին:

Կեսարիոյ գաւառին կառավարիչը, անշուշտ պէյ մը առնուազն, բան մը կ'արժէր հարկաւ, իր վկայագրէն ու ստորագրութենէն, բայց ատոր համար կարդացող մը պէտք էր: Ու ճամբու պահականոցները քիչ անգամ բախտաւոր կ'ըլլան այս գիծէ տասնապետներով: Այդ կայան-